



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

# ՓՈՔՐԻԿ ԼՐՏԵՍ

(ԱՂՋԱՆՈՒ ԳՈՂԴԵԿՈՑ)

«ԵՐԿՐՈՐԴ ՑՊԱԿՐՈՒԹԻՒՆ»

— + + + + —

Ա. ՊԵՏԵՎԵՐՈՅՈՒՐԳ.

ԾՐԱԿԸ, ԱՐԵՎԱՆԻ ՑՊԱԿՐՈՒՆ

1904.

84  
Դ-68

84  
7-68

ԵՐԱ ՏՊԱ 801  
20 APR 2006  
10 NOV 2011

## ՓՈՔՐԻԿ ԼՐՏԵՍ

Դրա մասուր ֆոքրիկ Առենու եր Նո  
Կոքրիկ խօսեան զատմէ եր Եթուր ու զա-  
տմաւ տիգուր Կոքրիկ առա-առանձու,  
Ընդ առարկան առաջ առաջ առաջ առաջ  
առաջ եր որի տարրը Հայութեանց պարու  
յան զժուր եր օրին անուն անկարեցի  
երա մասր մասու եր Ակոնու հայրը, որ Խա-  
ռաւուր եր այս առաջ զատու բացի բացի  
բացի զրուարուն ծովու եր Փոքրիկ Կոքրի-  
ները զայեանցուր պատահանքը խօսք աշխա-  
տու մասրերը, ու բայրու առաջը որուր լրա-  
րերի տակ զայեանցուր պատահանքը հա-  
նուր ապահանքու և եր ոյս զրուարուն մասը  
յի գույքու - Ցանուր մ Եր Առենու հօրը և որ-  
ուր առենուր ըստ պայմանագիր առաջ զատու  
ու իշու զեմքին առաջ զատու ու այսին հայ-  
տակը յանախանու և առաջ պատահանքը և եր մա-  
շական քայրը պահու մասու ու այս ինուր  
երա փոքրիկ Առենու ձանի պահու ինուր ինուր  
ինուր ինուր ինուր ինուր ինուր ինուր ինուր

Ս. ՊԵՏԵՐԱԲՈՒԽԻ  
ՊԱՐԱԳԱԿԱՆ ՏԱՐԱԾՈՎ  
1904.

72-15200

03 APR 2013

3005 99A 03

1005 VAM 01

5887

Дозвол. Ценз. С.-Петербургъ, 7 Апрѣля 1904 г.



„Пушкинская Скоропечатня“, Лештуковъ, 4.

60521. 67

Նրա անունը փոքրիկ Ստեննօն էր: Նա  
Պարիզի իսկական զաւակն էր: Նիշառ ու գու-  
նատ, տեսքով նա կըլինէր տաս-տամնու-  
հինդ տարեկան. փոքրիկ Ստեննօն այնպիսի  
տղայ էր, որի տարիքը ձշտութեամբ որոշել  
շատ գժւար էր. մինչեւ անգամ անկարելի:  
Նրա մայրը մեռած էր: Ծերունի հայրը, որ նա-  
ւաստի էր եղել, Տամրլ կոչւող թաղի քաղա-  
քային զբոսարանի ծառան էր: Փոքրիկ երեխա-  
ները, դայեակները, պառաները, խեղճ աշխատ-  
ուր մայրերը, մի խօսքով ամենքը, որոնք կառ-  
քերի տակ ընկնելու վտանգից աղատւելու հա-  
մար ապաստանում էին այս զբոսարանի ճեմե-  
լիքներում—ճանաչում էին Ստեննօնի հօրը և սի-  
րում: Ամենքը լսու գիտեին՝ որ չը նայած գաժան  
ու կոշտ գէմքին, նա շատ բարի և ազնիւ հոգի  
ունէր. յաճախ նրա գէմքին փայլում էր մայ-  
րական քաղցր ժպիտ, մանաւանդ երբ խօսքը  
նրա փոքրիկ Ստեննօնի մասին էր լինում. կած  
թէ երբ հարցնում էին ծերունուց:

—Ի՞նչպէս է ձեր փոքրիկ որդու առող-  
ջութիւնը:

Ծերունի Ստեննօն շատ էր սիրում իւր որդուն և իրան բաղդաւոր էր համարում: Փոքրիկ Ստեննօն սովորում էր ուսումնարանում: Երեկոները, դասերը վերջանալուց յետոյ, ծերունին գնում էր որդու յետեից և նրանք միասին շրջում էին ճեմելիքներում՝ կանգ առնելով իւրաքանչիւր նստարանի մօտ. բարեւում էին սովորական յաճախողներին և ընդունում նրանց բարեր:

Դժբաղդաբար Պարիղի պաշարման սկրդից արդէն ամեն բան փոխւել էր:

Փոքրիկ Ստեննօի հօր զբօսարանը փակել էին և դարձրել զինարան. իսկ իւեղձ ծերունուն նշանակել էին պահապան: Նա անքում հսկում էր զբօսարանին և ամբողջ օրն անց էր կացնում դատարկ ճեմելիքներում. իսկ իւր որդուն տեսնում էր միայն երեկոները ուշ՝ տանը:

Բայց արժէր նայել նրա դէմքին պրուսացիների մասին խօսելիս...

Փոքրիկ Ստեննօն շատ էլ դժգոհ չէր իւր նոր կեանքից:

Պաշարումն. այդ մի զւարձութիւնն է Երեխաների համար: Այդ ժամանակ ուսումնարանները փակւած են լինում. կընշանակէ դաս չկայ: Նարունակ արձակուրդ է. փողոցները նմանում են բազարի... Երեխան ամբողջ օրը

առաւօտից մինչև երեկոյ թափառում էր քաղաքում: Նա ուզեկցում էր տեղական զօրքերին, որոնք գնում էին պաշտպանելու. այդդէպրում նա գերադասում էր աւելի լաւ նւազող գունդը. այս բանում փոքրիկ Ստեննօն շատ հմուտ էր:

Նա կարող էր ձեզ պատմել, որ 96-րդ դնդի երաժշտութիւնը բանի պէտք չէ. իսկ 56-րդինը՝ հիանալի է:

Երբեմն նա գնում էր զինւորների զինախաղին նայելու: Առաւօտները զամբիւզը կամ տակ առած՝ մտնում էր այն մարդոց շարքը, որոնք շտապում էին մսի և հայի խանութիւները:

Այնտեղ լծակի մօտ երեխաները ծանօթանում էին իրար հետ և խօսակցում քաղաքականութեան մասին և նրանից, ինչպէս ամենքին յայտնի Ստեննօի որդուց, կարծիքներ էին հարցնում: Բայց աւելի դւարձալին նրանց «զալոշ» կուռող խաղն էր, — այն նշանաւոր խաղը, որը Պարիղի պաշարման ժամանակ իրեւ նորութիւն մտցրել էին բրետոնական զինւորները:

Երբ որ փոքրիկ Ստեննօն չէր լինում ոչ խրամի, ոչ էլ հայթուխի մօտ, նրան անպատճառ կարելի էր գտնել Շատո-կօի հրապարակում «զալոշ» խաղացողների մօտ: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ նա խաղին չէր

մասնակցում. զրա համար փող էր հարկաւոր: Նա միայն բաւականանում էր խաղացող ընկերներին նայելով: Խաղացողներից մեկը, բարձրահասակ, կապցա բլուզով մի տղայ, որ հէնց էն է շարունակ հինգ ֆրանկանոցներ էր դնում, առանձնապէս զրաւում էր նրա ուշաղրութիւնը: Երբ որ այդ բարձրահասակ տղան վազում էր, փողերը զնդղնդում էին նրա զրպաններում: Մի անգամ, վերցնելով այն դրամը, որ զլորւեց փոքրիկ Ստեննօի ոտների տակ, բարձրահասակ տղան կամացուկ ասաց նրան:

— Տը, ի՞նչ է, աչք ունես զրա վրայ... Եթէ ուզում ես, ես քեզ կ'ասեմ թէ որտեղ կարելի է ճարել զրանից:

Երբ որ խաղը վերջացաւ, բարձրահասակ տղան մի կողմ տարաւ փոքրիկ Ստեննօին և առաջարկեց միասին զնալ լրագիրներ ծախելու պրուսացիներին, որոնք ամեն անգամ վճարում են երեսնական ֆրանկ: Այդ առաջարկութիւնը սկզբում շատ զայրացրեց փոքրիկ Ստեննօին և նա երեք օր շարունակ էր գնում խաղացողների մօտ: Այդ օրերը նրա համար անտանելի էին: Գիշերները նրա աչքին պատկերանում էին հինգ ֆրանկանոցներն ու «գալոշ» խաղը և նրան թւումէր, թէ այդ փայլուն փողերը զլորւում են նրա մաշճակալի տակ:

Այն աստիճանն յափշտակւել էր նա, որ չամբերեց ու չորրորդ օրը գնաց Շատո-դի՛ հրապարակը, տեսաւ այն ընկերին և ենթարկւեց գայթակղութեան:

Առաւոտ էր, ձիւնը ծածկել էր գետինը. նրանք ճանապարհ ընկան, ուսերին տոպրակներ ունեին, իսկ լրագիրները թաղցրել էին բլուզի տակ: Դեռ նոր էր սկսել լրւանալ, երբ նրանք հասան Փլանդրեան դռների մօտ: Բարձրահասակ աղան բռնեց փոքրիկ Ստեննօի ձեռից և մօտենալով քաջ ու բարի դէմքով ձերունի պահապանին՝ մղկտաց աղքատի նման:

«Թոցլ տւեք մեզ անցնենք, բարի ծերունի... մեր մայրը հիւանդ է, հայրերնիս մեռած. ես ու իմ փոքր եղեայրս գնում ենք գաշտը միքիչ գետնախնձոր հաւաքենք»: Նա լաց էր լինում. իսկ փոքրիկ Ստեննօն ամօթից զլուխը կախ էր ձգել: Ծերունի պահապան նայեց նրանց, յետոյ փոշոտ ճանապարհին և վերջապէս ճանապարհ տալով ասաց. — «Անցէք շուտով»: Նրանք դուրս եկան օբերւիլեան ճանապարհը: Բարձրահասակ տղան ծիծաղում էր: Փոքրիկ Ստեննօն՝ կարծես երազում՝ տեսաւ գործարաններ զինանոցների փոխած, կտրտած իրեր, որոնց վրայ փուած էին թաց փալամներ և երկար, ծուռ ու մուռ խողովակներ, որոնք առաւտեան մառախուղի մի-

չով կարծես ձգւում էին դէպի երկինք: Երեխան-ները երբեմն պատահում էին մուշտակի մէջ փաթաթւած պահապանների և սպաների, որոնք հեռաղիտակով ըննում էին շրջակաները:

Տեղ-տեղ շինել էին վրաններ, նրանք ծածկւած էին ձիւնի հաստ շերտով, որ հալում էր հազիւ հաղ բոցկառ խարցյկի տարութիւնից:

Բարձրահասակ տղան դիտեր ճանապարհը և գնում էր գաշտով, որպէսզի չհանդիպեն դիշերապահներին: Չնայած այդ նախազգուշութեան, նրանք հանդիպեցին կամաւոր զինւորների մի մեծ գնդի: Կամաւորները իրանց վերարկուներում փաթթւած դարան էին մտել սցառեղ՝ փոսի մէջ, որ լցւած էր շրով և ձգւած ամբողջ Սուասոնեան երկաթուղու երկարութեամբ:

Այս անգամ բարձրահասակ տղան ի գուր էր գործ դնում սովորական լացախառն մրդկասոցը. զինւորները նրանց չէին թողնում անյ կենան: Բայց հէնց այդ միջոցին, երբ նա լաց էր լինում, հարեւան դիշերապահի տնակից ճանապարհի վրայ երեւաց մի ալեւոր ծերունի, որ շատ նման էր Ստեննօի հօրը:—Սա այստեղի ենթասպան էր:

— «Տ՛ը, փոքրիկներ, բաւական է ինքան լաց եղաք, ասաց նա. — Ճեղ թոյլ կը տան, որ գնաք գետնախնձորի, բայց առաջ մի մտէք ու

քիչ տաքացէք: Ահա, այդ փոքրիկ տղան բոլորովին սառել է ցրտից:

Բայց ոչ փոքրիկ Ստեննօն դողում էր ոչ թէ ցրակց, այլ երկիւղից ու ամօմից... Պահապանի տնակում նրանք տեսան մի քանի դինւոր, որոնք տաքանում էին թէժ կրակի առաջ և չորացնում էին սառած պարսիմատներ՝ սւինների հագցրած: Տեսնելով երեխաններին, տեղ տւին նրանց և սուրճ առաջարկեցին երբ երեխանները սուրճ էին խմում, զոնների մօտ երեւաց մի սպայ, որ զուրս կանչեց ենթասպային, փսփսաց նրա ականջին և շուտով հեռացաւ:

— «Տղերք, ծիծաղելով ասաց ենթասպան. այսօր պիտի լինի տաք... մենք իմացել ենք պրուսացինների պայմանական խօսքը.... Ես կարծում եմ, այս անգամ մեզ կը յաջողւի խել նրանցից այդ անիծեալ Բուրժէն»: Այս խօսքի վրայ սկսեցին ծիծաղել ու աղաղակել, պարել ու երգել: Նրանք սրում էին սւինները. երեխանները օգուտ քաղելով յանկարծ բարձրացած աղմուկից ու շփոթութիւնից, իսկոյն գուրս թռան տնակից: Խրամի յետեր ձրգւում էր մի հարթ տարածութիւն, իսկ աւելի հեռուն մի երկար, սպիտակ պատ: Հէնց այդ պատի մօտովն էր նրանց ճանապարհը: Ժամանակ առ ժամանակ նրանք կանգ էին առնում

ցոյց տալու համար, իբր թէ գետնախձոր են հաւաքում:

— «Վերագառնանք, չգնանք սյնտեղ, ասաց փոքրիկ Ստեննօն: Այդ խօսքի վրայ նրա ընկերը ուսերը վեր քաշեց և երկուսն էլ նորից առաջ գնացին: Յանկարծ նրանք լսեցին, որ մի մօտիկ տեղ հրացաններ են լինում:

— «Պառկիր, ասաց բարձրահասակ տղան, փռւելով գետնի վրայ: Ինքը պառկեց ու շւացրեց: Նրան պատասխանեցին նոյն շոյով: Յետոյ ձիւնի վրայ սողալով, նրանք առաջ անցան: Պատի դիմաց, գետնին հաւասար, երկացին դեղին կոշտ բեխեր, իսկ յետոյ՝ մի աղտոտած զլխարկ: Բարձրահասակ տղան թռաւ խրամի մէջ և կանգնեց պրուսացու կողքին:

— «Սա իմ փոքր եղբայրն է», ասաց նա ցոյց տալով փոքրիկ Ստեննօն: Ստեննօն այնքան փոքր էր, որ պրուսացին նրան տեսնելով ծիծաղեց. իսկ թռումքերի վրայով անց կացնելու համար ստիպւած էին խտել նրան: Պատի միւս կողմում ձգւած էին երկար հողակոյտեր, ընկած էին կտրտած ծառեր, իսկ ձիւնի մէջ շինած սե ծակերից գուրս էին ցցւած միւնցին դեղին կոշտ բեխերը և աղտոտած զլխարկները: Պրուսացիները, տեսնելով անցնող երեխաներին, ծիծաղում էին: Մի կողմում գտնւում էր այ-

գեպանի անակը, շրջապատած մէծ ծառերով. նրա նեղքին յարկը բռնել էին զինորները, որոնք թռուղթ էին խաղում, խօսում և մի և նոյն ժամանակ ապուր եփում թէ՛ կրտի վրայ: Նրանց ապուրից չորս կողմք կաղամճի և ձարպի հոտ էր կանգնել: Պրուսացի պահապան զինորները զանազանուում էին կամաւորներից:

Տան վերին յարկում ապրում էին սպաները: Այնտեղից լսում էր նւագարանի և շամպանեան զինու խցանների ձայնը: Տեսնելով Պարիզի երեխաներին՝ ուռա՛ կանչեցին. իսկ եղբ սրանք տւին լրագիրներ՝ նրանք զինի առաջարկեցին և ստիպեցին, որ պատմեն:

Ներկայ եղող սպաները հպարտ և գաժան գէմք ունեին. բարձահասակ տղան զւարձացնում էր նրաց իւր փողոցային կատակներով և օտարութի բարբառով: Նրանք կրկնելով նրա խօսքերը՝ ծիծաղում էին և հածցքով լողում Պարիզի այդ աղտի մէջ, որ երեխաները բերում էին իբրև նորութիւն: Փոքրիկ Ստեննօն նոյնպէս ցանկանում էր խօսել և ցոյց տալ նրանց, որ ինքն ևս յիմար չէ. բայց մի բան նրա լեզուն կարծես կապում էր:

Նրա զիմաց կանգնած էր մի պրուսացի, որ ամենից մեծն էր և միւսներից լուրչ: Նա լրագիրը ձեռքին բռնած՝ ցոյց էր տալիս, իբր

թէ կարդում է, բայց իսկապէս աչքերն անթարժ յառել էր Ստենօի վրայ: Նրա հայեցքն արտայայտում էր թէ քնքշութիւն և թէ յանդիմանութիւն:

Կարծես նա մարբերում էր իւր որդուն, որ Ստենօին հասակակից էր և գտնւում էր հեռու հայրենիքում, և կարծես ինքն իրան ասում էր.

— «Ես աւելի կրգերազատէի մեռնեմ, քան թէ որդուս տեսնեմ այսպիսի մի խայտառակ արհեստով պարապելիս»:

Այդ ըստէից փոքրիկ Ստեննօն զգաց, որ կարծես մի ծանր բան սեղմում է նրա կուրծքն ու գժւարացնում նրա շնչառութիւնը:

Այդ ծանր զգացմունքը մոռացութեան տալու համար՝ նա սկսեց դիմի խմել:

Շուտով ամեն բան մթնեց նրա աչքերում: Նալսում էր, կարծես երազում, իրը թէ իւր ընկերը բարձր ձայնով ծիծառում է ազգային հեծելազօրքի, նրանց զինախաղի, գիշերւայ շփոթութեան վրայ: Բայց, անա, բարձրահասակ տղան ձայնն իշեցրեց. սպաները մօտեցան նրան. Նրանց գէմքերը լրջացան: Անպիտանը պատրաստում էր նախազգուշացնել նրանց ֆրանսիական կամաւոր զինուորների յարձակումից:

— «Հարկաւոր չէ», ասաց նրան փոքրիկ Ստեննօն. «Հարկաւոր չէ այդ. Ես չեմ ուզում»...

Իսկ ընկերը ծիծաղեց նրա վրայ և շարունակեց պատմել:

Հաղիւնա վերջացրեց իւր պատմութիւնը, — բոլոր սպաները վեր կացան և նրանցիցմէկը, մատով երեխաներին ցոյց տալով դուռը՝ ասաց. «Գուրս կորէր»:

Սպաներն սկսեցին արագ-արագ գերմաներէն խօսել միմեանց հետ: Բարձրահասակ տղան հպարտ-հպարտ դուրս եկաւ ճնկճնկացներով փողերը, իսկ փոքրիկ Ստեննօն զլուխը կախ զցած, գնում էր նրա յետեից: Անցնելով այն պրուսացու մօտից, որի հայեցքն սյնքան հալածում էր նրան, կարծես թէ ականչովն ընկաւ մի աղետալի ձայն, որ ասում էր.

— «Զէ, այդ լաւ բան չէ»... Արտասուքի կաթիներ երեացին փոքրիկ Ստեննօի աչքերում: Երեխաները դուրս գալով սկսեցին դաշտով վազ տալ և շուտով տեղ հասան:

Գետնախնձորի տոպրակներն ուսերին՝ նրանք անցան կամաւոր զինուորների մօտով: Այնտեղ պատրաստում էին զիշերային յարձակման: Զօրքերը լուռ անցնում էին ու խմբում պատնէշների յետեօւմ:

Տերունի Էնթասպան նոյնպէս այնտեղ էր: Նա կարգաւորում էր իւր զինուորներին. ուրախութիւնը փայլում էր նրա գէմքի վրայ:

Երբ երեխաներն անցան մօտովը, նայեց նրանց  
յետևից ու ժպտաց...

Աւազ, որքան ցաւ ու տանջանք պատ-  
ճառեց փոքրիկ Ստեննօին այդ ժպիտը:

Նա ուզում էր աղաղակել ու ասել, թէ  
միք գնա այնտեղ մենք ձեղ մատնել ենք...

Բայց ընկերն ասաց նրան. «Եթէ յայտ-  
նես, մեզ իսկցն կ'սպանեն»:

Մահւան երկիւղը զսպեց նրան: Կուրնե-  
ւում նրանք մի գատարկ տուն մտան և փո-  
ղերը բաժնեցին իրանց մէջ: Պէտք է ասել, որ  
փողերը աղնւաբար բաժնեցին: Երբոր փոքրիկ  
Ստեննօն լսում էր փողերի ճնկճնկոցն իւր  
գրպաններում և մտածում «գալոշ» խաղի  
մասին, յանցանքն այնքան ծանր չէր թւում:  
Բայց երբ ընկերից բաժանւելով մենակ մնաց,  
գործած յանցանքն աւելի ևս սկսեց տանջել  
նրան: Կարծես ամբողջ Պարիզը փոխւել էր:  
Անցուղարձ անողները խիստ հայեցքով նայ-  
ում էին նրան և կարծես զիտէին, թէ որտեղից  
է գալիս նա: «Մատնիչ» խօսքը ամեն կողմից  
դիպում էր նրա ականջին:

Վերջապէս նա տուն վերադարձաւ և տես-  
նելով, որ հայրը տանը չէ, հանգստացաւ:

Նա արագութեամբ մտաւ իւր սենեակը  
և սկսեց թաքցնել բարձի տակ այն փողերը,

որոնք այնքան տանջում էին նրան: Փոքրիկ  
Ստեննօի հայրը երբէք այնքան բարի և ուրախ  
չէր եղել, ինչպէս այդ երեկոյ: Գաւառներից  
ստացւած լուրերը հաղորդում էին, որ զոր-  
ծերը լաւ են գնում: ընթրիքի ժամանակ ծե-  
րունի զինուորը նայեց պատից կախած հրացա-  
նին և ուրախ ժպտով ասաց իւր որդուն.

— «Է՛հ, տղաս, որ մեծ լինէիր, դու էլ  
կ'երթայիր պրուսացիների դէմ»:

Ժամի ութին թնդանօթք որոտաց: «Սրանք  
օքերւիլցիներն են. կուռւմ են թուրժէում», ասաց  
հայրը, որ ձեռքի հինգ մատի նման զիտէր բերդի  
ծակ ու ծուկերը: Եյս խօսքի վրայ փոքրիկ Ստեն-  
նօի գոյնը թռաւ. գնաց քնելու, իբր թէ յոդ-  
նած է: Բայց քունը չէր դալիս: Թնդանօթք շարու-  
նակ որոտում էր: Կարծես տեսնում էր, թէ  
ինչպէս կամաւոր զինուորները յարձակում են  
պրուսացիների վրայ և ինչպէս ընկնում են գա-  
րան մտած գորքի ձեռքը: Յետոյ մտաբերում էր  
իրան ժպտացող ենթասպային, պատկերացնում  
էր նրան ձիւնի վրայ արիւնի մէջ թաւալւած  
և նրա հետ միասին ընկած ուրիշ շատերին...

Ահա այդ բոլոր ընկածների արիւնի զինը  
թաքցրած էր այնտեղ, նրա բարձի տակ, և այդ ա-  
մենը արել էր ինքը, — ծերունի Ստեննօ զինուորի  
որդին... Սրտասուքը խեղգում էր նրան, նա լսում  
էր, թէ ինչպէս հարեւան սենեակում ման էր գալիս  
հայրը և բաց էր անում լուսամուտը: Ներբեռում  
հրապարակի վրայ հաւաքւում էին զինուորներ:  
Կամաւոր զինուորների գունդը պատրաստում

Էր արշաւանքի: Խեղճ էր եխան չէր կարողանում  
զսպել իւր հեկեկանքը:

— «Ի՞նչ է պատահել քեզ», հարցրեց  
Ստենօի հայրը, մտնելով նրա սենեակո:

Երեխան չկարողացաւ այլևս զսպել իրան,  
թռաւ անկողնից ու չոքեց հօր առաջ: Տեղիցը  
շարժւելուն պէս բոլոր փողերը թափւեցան  
յատակի վրայ:

— «Այդ ի՞նչ փողեր են, դու գողացել ես»,  
ասաց ծերունին, ամբողջ մարմնով գողալով:

Այն ժամանակ փոքրիկ Ստեննօն առանց կանդ  
առնելու միանդամից պատմեց հօրը բոլոր իրողու-  
թիւնը: Քանի պատմում էր, այնքան թեթևա-  
նում էր սիրաբ: Ծերունի Ստեննօն լսում էր նրան  
սարսափով: Երբ խոստովանքը վերջացաւ, նա  
ձեռքերով ծածկեց երեսը և սկսեց հեկեկալ:

— Հայրիկ, հայրիկ...ուզում էր ասել երեխան:  
Բայց ծերունին առանց պատասխան տա-  
լու, հրեց նրան հեռու. յատակից հաւաքեց  
փողերը և հարցրեց.

— «Այս է բոլոր փողը»: Փոքրիկ Ստեն-  
նօն զլխով արեց: Ծերունին վերցրեց հրացանը,  
փառօղամանը և փողերը գրպանը դնելով ասաց.

— «Լաւ, ես այս փողերը կը վերադարձնեմ  
պրուսացիներին»:

Եւ առանց այլևս մի խօսք ասելու, մինչեւ  
անգամ առանց նայելու այն կողմը, որտեղ գտն-  
ւում էր փոքրիկ Ստեննօն, նա դուրս եկաւ փո-  
ղոց ու միացաւ արշաւանքի գնացող զօրքին: Այն  
օրից ծերունի Ստեննօն այլևս չերեադ...

Հայաստանի Ազգային գրադարան



NL0431320

58.87

Գինե կ 3 400.